

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ «ԽՆԱՅՈՂԱԿԱՆ» ԱՎԱՆԴԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,
 Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2,
 Հեռ.՝ (374 10) 56 11 11; Ֆաքս՝ (374 10) 51 31 33
 Էլ. հասցե՝ office@ameriabank.am; www.ameriabank.am

Խնայողական հաշիվ է համարվում ավանդի այն տեսակը, որի դեպքում հաճախորդը ավանդի ողջ ժամկետի ընթացքում իրավունք ունի ավելացնել և նվազեցնել ավանդը: Ավանդի դիմաց տոկոսները հաշվարկվում են բանկային ավանդի հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ: Ավանդատուն իրավունք ունի խնայողական հաշվի գումարները օգտագործել առանց սահմանափակումների:¹

Խնայողական հաշվի նվազագույն մնացորդ. 200 000 ՀՀ դրամ, 500 ԱՄՆ դոլար, 300 Եվրո, 15,000 ռուբլի

Պարզ տոկոսադրույք

Տոկոսների վճարման եղանակ	Արժույթ			
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի
Տոկոսների կապիտալացում (ամսական)	տարեկան տոկոսադրույք հաշվին սահմանված նվազագույն մնացորդի առակայության դեպքում			
	4.0%	1.0%	0.2%	3.0%
	տարեկան տոկոսադրույք հաշվի մնացորդը սահմանված նվազագույն մնացորդից փոքր լինելու դեպքում			
	0.1%			

Տարեկան տոկոսային եկամտաբերություն

Տոկոսների վճարման եղանակ	Արժույթ			
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի
Տոկոսների կապիտալացում (ամսական)	տարեկան տոկոսադրույք հաշվին սահմանված նվազագույն մնացորդի առակայության դեպքում			
	4.1%	1.0%	0.2%	3.0%
	տարեկան տոկոսադրույք հաշվի մնացորդը սահմանված նվազագույն մնացորդից փոքր լինելու դեպքում			
	0.1%			

***Խնայողական ավանդային հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկելիս նվազեցվել է եկամտահարկը:**

¹ Ավանդատուն իրավունք ունի խնայողական հաշիվ բացել և ավանդ ներդնել սահմանված նվազագույն մնացորդից փոքր գումարով:

Ուշադրություն: Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք դուք, եթե Ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերներդնեիք ավանդի տեսքով:

Խնայողական ավանդի ներդրման կանոնները

- 1) Խնայողական ավանդի ընդունման հիմքը Բանկի և Ավանդատուի միջև կնքված խնայողական հաշվի հայտ-պայմանագիրն է: Հայտ-պայմանագրի ձևը գրավոր է:
- 2) Խնայողական ավանդի պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով և կարող է վաղաժամկետ դադարել հետևյալ դեպքում.
 - Ավանդատուի միակողմանի ցանկությամբ
 - Բոլոր Ավանդատուների փոխադարձ համաձայնությամբ՝ համատեղ Ավանդի դեպքում
 - Բանկի նախաձեռնությամբ, եթե հաշվին 1 տարի և ավելի ժամկետով դրամական միջոցները բացակայում են, որի դեպքում Ավանդատու(ներ)ը ծանուցվում են առնվազն 5 օր առաջ համաձայն պայմանագրի՝ ավանդատուի կողմից ընտրված եղանակով (էլեկտրոնային եղանակով, Բանկի տարածքում առձեռն, փոստային կապի միջոցով կամ այլ եղանակով)
- 3) Բանկում խնայողական ավանդ ներդնող Ավանդատուին Բանկը բացում է ընթացիկ հաշիվ ՀՀ դրամով:

Բանկային հաշիվների բացման համար ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայությունների համարանիշ, ոչ ռեզիդենտների համար՝ անձը հաստատող փաստաթուղթ:

1. Հաշվից քաղվածքները տրամադրվում են հետևյալ սակագներով.

<i>Քաղվածքի տրամադրման միջնորդավճար</i>	
Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	անվճար
1-3 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում ²	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
Թղթային ձևով պահվող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար

2. Հաշիվը սպասարկվում է հետևյալ սակագներով.

<i>1. Կանխիկ դրամական միջոցների մուտքագրում հաշվին</i>	
1.1. ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո	անվճար
1.2. ՌԴ ռուբլի	համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափի

² Երեք տարուց ավելի վաղեմություն ունեցող քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ նյութերի (այդ թվում՝ տեղեկանքների, փաստաթղթերի, դրանց կրկնօրինակների, աուդիտորական հարցման պատասխանների) տրամադրումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով:

2. Կանխիկի տրամադրում³	
2.1. Հաճախորդի հաշվին կանխիկ մուտքագրված միջոցներից	անվճար
2.2. Հաճախորդի հաշվին անկանխիկ մուտքագրված միջոցներից	
2.2.1. ՀՀ դրամ	
2.2.1.1. Երևան քաղաքի Բանկի տարածքային ստորաբաժանումներում	0.2%, նվազագույնը՝ 200 ՀՀ դրամ
2.2.1.2. Երևան քաղաքից դուրս Բանկի տարածքային ստորաբաժանումներում	0.1%, նվազագույնը՝ 200 ՀՀ դրամ
2.2.2. ՌԴ ռուբլի	0.3%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
2.2.3. ԱՄՆ դոլար, եվրո	0.4%, նվազագույնը՝ 1 000 ՀՀ դրամ

3. Հեռակառավարման համակարգերով հաշվում եղած դրամական միջոցների տնօրինման հնարավորությունները և սակագները⁴

1. Հեռախոս – բանկ ծառայություն ⁵	Միանվագ 5,000 ՀՀ դրամ
2. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով՝ հաշիվների քաղվածքներ և գործարքներ դիտելու, գործարքներ կատարելու իրավունքով.	

³ Կանխիկի տրամադրման միջնորդավճար չի գանձվում խնայողական ավանդների տոկոսագումարների կանխիկացման դեպքում:

⁴ Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին: Հեռակառավարման համակարգերով հաճախորդների սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս (մինչև ժամը 09:30 և ժամը 17:00-ից հետո), նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել կամ իրագործվել փաստացի կատարման պահին գործող փոխարժեքով:

⁵ Հեռախոս-բանկ ծառայության շրջանակներում իրականացվում են հետևյալ գործարքները՝ ստորև նշված սահմանաչափերով՝

N	Գործարքի տեսակ	1 գործարքի սահմանաչափ (ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ)
1	ձայնային տեղեկատվության ստացում առկա հաշիվների վերաբերյալ՝ հեռախոսակապի միջոցով	սահմանաչափ չի կիրառվում
2	արտարժույթի առուվաճառքի գործարք կատարելու նպատակով գործարքի մեծության (ծավալի) և փոխարժեքի սահմանում (համաձայնեցում) Բանկի հետ հեռախոսակապի միջոցով	սահմանաչափ չի կիրառվում
3	ներբանկային փոխանցումներ հաճախորդի հաշիվների միջև	մինչև 10 000 000 ՀՀ դրամ
4	ներբանկային փոխանցումներ այլ հաճախորդի հաշիվներին	մինչև 10 000 000 ՀՀ դրամ
5	արտարժույթի անկանխիկ փոխարկում	մինչև 10 000 000 ՀՀ դրամ
6	ՀՀ այլ Բանկեր կատարվող փոխանցումներ, եթե հաճախորդը նշված փոխանցումն արդեն իսկ կատարել է	մինչև 5 000 000 ՀՀ դրամ
6.1	ՀՀ այլ Բանկեր կատարվող փոխանցումներ, եթե հաճախորդը առաջին անգամ է կատարում նշված փոխանցումը	մինչև 3 000 000 ՀՀ դրամ
7	միջազգային փոխանցումներ (օրական առավելագույնը 2 գործարք)	մինչև 1 000 000 ՀՀ դրամ
8	կոմունալ վճարումներ	մինչև 1 000 000 ՀՀ դրամ

2.1. Մեկանգամյա ծածկագիր գներացնող սարքի օգտագործմամբ	միանվագ 3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ համակարգ մուտքագրվելու և գործարքներ հաստատելու համար մեկանգամյա ծածկագիր գներացնող մեկ սարք
2.2. Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման կողմի օգտագործմամբ	միանվագ 1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ համակարգ մուտքագրվելու և գործարքներ հաստատելու համար Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման մեկ կոդ
2.3. Ծածկագիր գներացնող սարքի/Ամերիա Թոքենի տրամադրում (կորցնելու կամ վնասելու դեպքում), սարքի տեսակի փոխարինում	3,000 ՀՀ դրամ

4. Կանխիկ միջոցների տրամադրումն իրականացվում է հաճախորդի կողմից գումարը ստանալու նախորդ աշխատանքային օրը ներկայացված հայտի հիման վրա, եթե գումարը գերազանցում է 30 մլն ՀՀ դրամը, 100,000 ԱՄՆ դոլարը և 30,000 եվրոն և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթը՝ մյուս արտարժույթների համար՝ գլխամասային գրասենյակում: Երևան քաղաքի Բանկի տարածքային ստորաբաժանումների համար սահմանվում է հետևյալ սահմանաչափը՝ 20 մլն ՀՀ դրամ, 25,000 ԱՄՆ դոլար և 15,000 եվրո, իսկ Երևան քաղաքից դուրս Բանկի տարածքային ստորաբաժանումներում՝ 10 մլն ՀՀ դրամ, 20,000 ԱՄՆ դոլար և 10,000 եվրո: Երևան քաղաքից դուրս մասնաճյուղերի դեպքում նշված սահմանաչափը գերազանցող կանխիկի տրամադրումը իրականացվում է հաճախորդի կողմից հայտը ներկայացնելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ հաշվից կանխիկացումից հետո հաճախորդը փակում է բոլոր հաշիվները և հաճախորդի մնացորդը փոքր է, քան սակագներով սահմանված կանխիկացման նվազագույն գումարը, կանխիկացումից միջնորդավճար չի գանձվում:
5. Բանկը թղթային եղանակով և հեռակառավարման համակարգերով վճարման հանձնարարականներն ընդունում և փոխանցում է համաձայն ստորև սահմանված ժամանակացույցի՝ հաճախորդի հաշվին փոխանցման ենթակա գումարի փաստացի առկայության պարագայում.

	Թղթային եղանակով ներկայացվող վճարման հանձնարարականներ				Բանկ-Հաճախորդ/Բնտերնետ-Բանկինգ/ Մոբայլ բանկինգ համակարգերով ներկայացվող վճարման հանձնարարականներ Հեռախոս – բանկ ծառայության միջոցով ներկայացվող վճարման հանձնարարականներ (բացառությամբ ներբանկային փոխանցումների)			
	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում
ՀՀ դրամ	Մինչև ժամը 13:00	Նույն բանկային և օրը	Ժամը 13:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 14:00	Նույն բանկային օրը	Ժամը 14:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
ԱՄՆ դոլար	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային և օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 17:00	Նույն բանկային օրը	Ժամը 17:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
Այլ արտարժույթ	Մինչև ժամը 15:00	Նույն բանկային և օրը	Ժամը 15:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը

Ուշադրություն: Հեռախոս-բանկ ծառայության միջոցով իրականացվող ներբանկային փոխանցումները կատարվում են նույն օրվա ընթացքում:

Ուշադրություն: Ժամը 13:00-ից մինչ 15:00-ը թղթային եղանակով ներկայացված 50 մլն ՀՀ դրամը չզերազանցող վճարման հանձնարարականների (14:00-ից մինչև 15:15-ը էլեկտրոնային վճարման հանձնարարականների դեպքում) հիման վրա նույն բանկային օրը փոխանցում կատարելու համար գանձվում է 10,000 ՀՀ դրամ միջնորդավճար՝ յուրաքանչյուր վճարման հանձնարականի համար:

6. Հաճախորդի պահանջով ՀՀ-ում կամ ՀՀ-ից դուրս կատարված գործարքների վերաբերյալ Բանկը կատարում է հարցում՝ ըստ թղթակցի կողմից փաստացի ներկայացված ծախսերի, իսկ հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխումը և չեղյալ համարումը կատարում է ըստ հետևյալ սակագների.

1. Հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխում և չեղյալ համարում	
1.1. ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ
1.2. Արտարժույթ ⁶	25,000 ՀՀ դրամ
2. Ինտերնետ-Բանկինգ համակարգով հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխում և չեղյալ համարում	
2.3. ՀՀ դրամով վճարման դեպքում	500 ՀՀ դրամ
2.4. ՌԴ ռուբլով վճարման դեպքում	10,000 ՀՀ դրամ
2.5. Այլ արտարժույթով վճարման դեպքում	25,000 ՀՀ դրամ
3. Հաճախորդի վճարման հանձնարարականի հետ վերադարձ թղթակցից բանկի կողմից	
3.1 ՀՀ դրամ	Անվճար
3.2 ՌԴ ռուբլի	25,000 ՀՀ դրամ
3.2.1 Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ Բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարականի դեպքում	10,000 ՀՀ դրամ
3.3 Արտարժույթ	25,000 ՀՀ դրամ
4. Անկանխիկ արտարժույթի մուտքագրում հաշվին	անվճար

7. Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է՝ որպես բաժանարար հիմք ընդունելով տարին 365 օր:
8. Տոկոսագումարների հաշվարկը իրականացվում է Ավանդի՝ Բանկ մուտքագրվելու հաջորդ օրվանից մինչև Ավանդը վերադարձնելու օրվան նախորդող օրը:
9. Ավանդատուի բանկային հաշվին մուտքագրված տոկոսագումարը ենթակա է հարկման եկամտահարկով՝ ՀՀ տարածքում ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով 10% տոկոսադրույքով, ԼՂՀ տարածքում ԼՂՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով 5% տոկոսադրույքով:
10. Ավանդի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարները հաշվեգրվում են հաշվին օրացուցային ամսվա վերջում:
11. Ավանդատուին տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով: Արտարժույթային ավանդների դեպքում տոկոսագումարների փոխարկումը ՀՀ դրամի կատարվում է վճարման օրվա դրությամբ արտարժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:

⁶ Ի լրումն վերոնշյալ սակագնի՝ երրորդ կողմի ներկայացված ծախսերը նույնպես ենթակա են փոխհատուցման հաճախորդի կողմից:

12. Բանկային ավանդի պայմանագրով սահմանված Ավանդի համար տոկոսների չափը Բանկի կողմից կարող է միակողմանիորեն փոփոխվել: Այդ մասին Բանկը առնվազն տասնհինգ օր առաջ պետք է ծանուցի հաճախորդներին:
13. Բանկը պարտավոր է ավանդատուի առաջին իսկ պահանջով վերադարձնել Ավանդը՝ Ավանդի գումարը և պայմանագրով սահմանված կարգով հաշվարկված տոկոսները Ավանդատուի՝ Բանկում բացված ընթացիկ հաշվին փոխանցելու միջոցով (նման հաշվի առկայության դեպքում) կամ կանխիկ վճարման միջոցով:
14. Հաշվում առկա դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու), հաշվով գործառնությունները դադարեցվելու կամ կողմերի միջև կնքված այլ պայմանագրով նախատեսված լինելու դեպքերում:
15. Բանկը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշումը կամ վճիռը ստանալու և Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելու Բանկի պարտավորության մասին հաճախորդին 2 (երկու) բանկային օրվա ընթացքում տեղեկացնելու համար (գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով):
16. Առանց հաճախորդի կարգադրության հաշվում եղած դրամական միջոցները թույլատրվում է դուրս գրել դատարանի վճռով, ինչպես նաև օրենքով և հաճախորդի հետ կնքված պայմանագրերով սահմանված դեպքերում:
17. Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու՝ հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
18. Ավանդատուի մահվան դեպքում Ավանդի տոկոսների հավելագրումը շարունակվում է: Տվյալ դեպքում գումարները Ավանդատուի ժառանգներին են տրվում նշված գումարների նկատմամբ վերջիններիս սեփականության իրավունքը հաստատող՝ օրենքով սահմանված կարգով ժառանգության պատշաճ ձևակերպման և այդ փաստը հավաստող փաստաթղթերը բանկ ներկայացնելու դեպքում:
19. Ավանդների հատուցման երաշխավորող է հանդիսանում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը՝ «Ֆիզիկական անձանց Բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:
20. Օրենքով սահմանված են ավանդների երաշխավորման հետևյալ չափերը.
 - միայն ՀՀ դրամով Բանկային ավանդի առկայության դեպքում երաշխավորված ավանդի չափը կազմում է 10 մլն ՀՀ դրամ,
 - միայն արտարժույթային Բանկային ավանդի առկայության դեպքում երաշխավորված ավանդի չափը կազմում է 5 մլն ՀՀ դրամ,
 - եթե ավանդատուն ունի դրամային և արտարժույթային Բանկային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 5 մլն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 10 մլն ՀՀ դրամի չափով,
 - եթե հաճախորդը ունի դրամային և արժույթային Բանկային ավանդներ, և դրամային ավանդի գումարը պակաս է 5 մլն ՀՀ դրամից, երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային Բանկային ավանդը՝ 5 մլն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:
21. Ավանդատուն իր ավանդներին վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու և սխալ հայտնաբերելու դեպքում պարզաբանումներ ստանալու համար կարող է դիմել Բանկ և ստանալ գրավոր պատասխան 5-օրյա ժամկետում:
22. Ավանդային պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

23. Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:
24. Սույնով Բանկը հայտարարում է, որ կնքել է իր կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր՝ հետևյալ պայմաններով.
- 24.1. Համաձայնագիրը նախատեսում է ցանկացած ժամանակ համաձայնագիրը միակողմանի լուծելու Բանկի իրավունքը,
- 24.2. Համաձայնագիրը կնքվել է մեկ տարի ժամկետով,
- 24.3. Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Խնայողական ավանդի պայմանագրով վճարվելիք տոկոսադրույքի հաշվարկման օրինակ՝

Ավանդի գումար՝ 200,000 ՀՀ դրամ

Ավանդի ներդրման ամսաթիվ՝ 01/01/17

Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 4%

Տոկոսների վճարման առաջին ամսաթիվ՝ 01/02/17

Վճարվելիք տոկոսագումար= $200,000 * 4 / 100 / 365 * 30 = 657.53$

Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով)= $657.53 - 657.53 * 10 / 100 = 591.776$

01/02/17-ին ավանդի մայր գումարը ավելացել է 50,000 ՀՀ դրամով:

Տոկոսների վճարման երկրորդ ամսաթիվ՝ 01/03/17

Վճարվելիք տոկոսագումար= $250,591.776 * 4 / 100 / 365 * 28 = 768.93$

Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով) = $768.93 - 768.93 * 10 / 100 = 692.036$

01/03/17-ին ավանդի մայր գումարը նվազել է 100,000 ՀՀ դրամով

Տոկոսների վճարման երրորդ ամսաթիվ՝ 01/04/17

Վճարվելիք տոկոսագումար= $151,283.812 * 0.1 / 100 / 365 * 31 = 12.84$

Վճարվելիք գուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով)= $12.84 - 12.84 * 10 / 100 = 11.55$